Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված բնակավայրերի (բացառությամբ՝ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների) տնտեսավարողների համար Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներով հաստատված պետական աջակցության ծրագրերի շրջանակում լրացուցիչ արտոնություններ սահմանելու միջոցառումը և բնակավայրերի ցանկը հաստատելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«___» _____ 2025 թվական N __ -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 2093-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԸ ԿԱՌՈՒՑՎՈՂ, ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՂ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ 300 ԴՊՐՈՑՆԵՐ»-Ի ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ) ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.
1. Հաստատել՝
1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված բնակավայրերի (բացառությամբ՝ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների) տնտեսավարողների համար Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներով հաստատված պետական աջակցության ծրագրերի շրջանակում լրացուցիչ արտոնություններ սահմանելու միջոցառումը՝ համաձայն N 1 հավելվածի.
2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի

նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված բնակավայրերի (բացառությամբ՝ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների) ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2025 թվականի

-----ի N ---Լ որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 2093-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԸ ԿԱՌՈՒՑՎՈՂ, ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՂ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ 300 ԴՊՐՈՑՆԵՐ»-Ի ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ) ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված բնակավայրերի (բացառությամբ՝ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների) տնտեսավարողների համար Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներով հաստատված պետական աջակցության ծրագրերի շրջանակում լրացուցիչ արտոնություններ սահմանելու **միջոցառման** (այսուհետ՝ միջոցառում) իրականացումը պայմանավորված է հանրապետության մարզերում կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող դպրոցների բնակավայրերում մշտապես բնակվող կամ գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար գյուղատնտեսության ոլորտում վարկերի կամ լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորմամբ իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-Լ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ, Հայաստանի

Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 27-ի N 1284-Լ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշումներով հաստատված պետական աջակցության ծրագրերի (այսուհետ՝ ծրագրեր) շրջանակում լրացուցիչ արտոնություններ սահմանելու անհրաժեշտությամբ։

2. Միջոցառման նպատակն է՝ N 2 հավելվածի ցանկում ընդգրկված բնակավայրերում (այսուհետ՝ բնակավայր) հաշվառված և մշտապես բնակվող կամ գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար միջոցառման 1-ին կետում նշված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների շրջանակում լրացուցիչ արտոնություններ սահմանելու միջոցով բնակավայրերում ստեղծել նպաստավոր պայմաններ ագրոպարենային ոլորտում գործունեություն իրականացնելու համար, կրճատել բնակչության արտահոսքը, նպաստել տնտեսական ակտիվությանը, ներդրումների և արտադրության ծավալների ավելացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսության զարգացմանն ու արտադրողականության բարձրացմանը։
3. Միջոցառման շրջանակում բնակավայրերի տնտեսավարողներին ծրագրերով սահմանված վարկը կամ լիզինգը կտրամադրվեն աղյուսակով սահմանված պայմաններով՝ միջոցառմամբ սահմանված պահանջներին համապատասխան։
4. Միջոցառմամբ նախատեսվող վարկի կամ լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման ընթացակարգերը պետք է համապատասխանեն ծրագրերի պայմաններին և ընթացակարգերին։
5. Միջոցառումն իրականացվելու է 2025-2026 թվականներին։
6. Միջոցառման մասնակիցներն են՝

- բնակավայրերի տնտեսավարողները՝ ֆիզիկական անձը, ով առնվազն 5 տարի հաշվառված է և մշտապես բնակվում է այդ բնակավայրում և բավարարում է սույն կետի առաջին ենթակետի «ա» պարբերության պահանջներին, ինչպես նաև իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որը առնվազն մեկ տարի գործունեություն է իրականացնում այդ բնակավայրում և որը՝

ա. ունի բարվոք վարկային պատմություն, այսինքն, ըստ ԱՔՌԱ վարկային բյուրոյի տեղեկատվության, դիմումի ներկայացման օրվան նախորդող 12 ամիսների ընթացքում չի ունեցել գումարային 90 օր և ավելի ժամկետով ժամկետանց վարկային պարտավորություններ կամ չունի ձևավորված վարկային պատմություն,

բ. ունեցել է բարվոք հարկային պատմություն, այսինքն՝ դիմումի ներկայացման օրվան նախորդող 365 օրերի ընթացքում չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական վարույթ հարուցված չէ, կամ դիմումի ներկայացմանը նախորդող աշխատանքային օրվա դրությամբ չունի չվճարված հարկային պարտավորություններ (այսուհետ՝ շահառու).

- ծրագրերին մասնակից առևտրային բանկերը կամ վարկային կազմակերպությունները (այսուհետ՝ ֆինանսական կառույցներ).

- Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն).
- Նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի Գյուղական ֆինանսավորման կառույցը (այսուհետ՝ ԳՖԿ)։

7. Միջոցառումը իրականացվում է հետևյալ ընթացակարգով՝

- Շահառուները միջոցառման շրջանակում ծրագրերից որևէ մեկին մասնակցելու և միջոցառմամբ նախատեսված աջակցությունից օգտվելու համար, բացի համապատասխան ծրագրով նախատեսված փաստաթղթերից ֆինանսական կառույցին են ներկայացնում՝

ա. անձը հաստատող փաստաթղթի պատճեն, որում հստակ նշված կլինի անձի հաշվառման (ֆիզիկական անձանց դեպքում) կամ գործունեության իրականացման հասցեն (իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում),

բ. ԱՔՌԱ վարկային բյուրոյի տեղեկատվությունը՝ վարկային դրական պատմության վերաբերյալ,

գ.պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկանք (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում)՝ բարվոք հարկային պատմության վերաբերյալ,

դ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության տարածքային ստորաբաժանման (անձնագրային բաժնի) կողմից տրված տեղեկանք՝ շահառուի բոլոր հաշվառումների մասին (ֆիզիկական անձանց դեպքում),

ե. համայնքի կամ բնակավայրի ղեկավարի կողմից տրված տեղեկանք, որ շահառուն բնակավայրի մշտական բնակիչ է և առնվազն 5 տարի փաստացի բնակվում է տվյալ բնակավայրում (ֆիզիկական անձանց դեպքում),

զ. համայնքի կամ բնակավայրի ղեկավարի կողմից տրված տեղեկանք, որ շահառուն առնվազն 1 տարի փաստացի գործունեություն է իրականացնում բնակավայրում (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում).

- սույն կետի 1-ին ենթակետում նշված վարկային դրական պատմության վերաբերյալ զեկույցը և բարվոք հարկային պատմության վերաբերյալ տեղեկանքը պետք է տրամադրված լինեն դիմումը ֆինանսական կառույց մուտքագրելու օրվանից հաշված ոչ ուշ, քան 10 օր առաջ.
- միջոցառման շրջանակում ծրագրերը կիրականացվեն աղյուսակում նշված պայմաններին համապատասխան, վարկի կամ լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման մասով՝ ծրագրերի ընթացակարգերին համապատասխան։

8. Լիզինգի աջակցության ծրագրերի դեպքում կանխավճարի սուբսիդավորման գործընթացը նախաձեռնում են ֆինանսական

կառույցները։ Լիզինգի կանխավճարի սուբսիդավորման գումարը ԳՖԿ-ի կողմից փոխանցվում է ֆինանսական կառույցի համապատասխան հաշվին տվյալ ֆինանսական կառույցի կանխավճարի սուբսիդավորման հայտի հիման վրա։ Շահառուն ֆինանսական կառույցին է վճարում ձեռք բերվող լիզինգի առարկայի արժեքի 20 տոկոս կանխավճարի 70 տոկոսը։ Ֆինանսական կառույցը կանխավճարի սուբսիդավորման հայտը ԳՖԿ-ին է ներկայացնում լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման առաջին հայտի հետ միասին։ Հայտի հետ միասին (տվյալ լիզիգառուի համար առաջին անգամ ներկայացվող) ֆինանսական կառույցը ԳՖԿ-ին է ներկայացնում նաև ծրագրի 7-րդ կետով սահմանված փաստաթղթերը, ֆինանսական կառույցի և շահառուի միջև կնքված լիզինգի տրամադրման պայմանագրի պատճենը և շահառուի կողմից ձեռք բերվող լիզինգի առարկայի արժեքի 20 տոկոս կանխավճարի 70 տոկոս չսուբսիդավորվող արժեքի վճարումը հավաստող փաստաթուղթ։ Կանխավճարի սուբսիդավորման հայտի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են ԳՖԿ-ի և տվյալ ֆինանսական կառույցի միջև կնքվող պայմանագրով։

9. ԳՖԿ-ն կանխավճարի սուբսիդավորման հայտը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ֆինանսական կառույցի հետ ճշգրտում է հայտերը, ստուգում է միջոցառման պահանջներին համապատասխանությունը և լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման հայտի հետ միասին դրական եզրակացությամբ ներկայացնում Նախարարություն։ Նախարարությունը ԳՖԿ-ի կողմից տրված դրական եզրակացության և ԳՖԿ-ի ու Նախարարության միջև կնքված սուբսիդիայի տրամադրման պայմանագրի հիման վրա ծրագրով սահմանված ժամկետներում (ֆինանսական միջոցների առկայության դեպքում) լիզինգի կանխավճարի և տոկոսադրույքի սուբսիդավորման գումարները փոխանցում է ԳՖԿ–ին (ֆինանսական միջոցների բացակայության դեպքում ֆինանսավորումը կատարվում է համապատասխան միջոցների ներգրավումից հետո), որն էլ փոխանցում է համապատասխան ֆինանսական կառույցի հաշվեհամարին։ Կանխավճարի սուբսիդավորման հայտը՝ ծրագրի և միջոցառման պահանջներին չբավարարելու դեպքում ԳՖԿ-ն երեք աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է տեղյակ պահել ֆինանսական կառույցին՝ նշելով հայտի չբավարարման հիմքերը։
10. Միջոցառման 9-րդ կետում նշված, ԳՖԿ-ի կողմից կանխավճարի սուբսիդավորման հայտի չբավարարման դեպքում, ֆինանսական կառուցը այդ մասին տեղեկացվելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ԳՖԿ-ին կարող է ներկայացնել ծրագրի և միջոցառման պահանջներին համապատասխան նոր հայտ։
11. ԳՖԿ-ի կողմից ամսական պարբերականությամբ Նախարարությանը ներկայացվող ծրագրերի հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկատվություն միջոցառման ընթացքի, այդ թվում՝ լիզինգի ծրագրերի կանխավճարի սուբսիդավորման մասին՝ ԳՖԿ-ի ու Նախարարության միջև կնքված սուբսիդիայի տրամադրման պայմանագրով սահմանվող ձևաչափով։
12. Միջոցառման հնարավոր ռիսկեր են համարվում՝
    - վարկային ռեսուրսների ոչ նպատակային օգտագործումը,
    - բնական աղետների, արտակարգ իրավիճակների հետևանքով վարկի (լիզինգի) մայր գումարի վերադարձման

անհնարինությունը:

13. Միջոցառման իրականացման արդյունքում՝ բնակավայրերում կստեղծվեն ագրոպարենային ոլորտում գործունեություն իրականացնելու համար նպաստավոր պայմաններ, կկրճատվի բնակչության արտահոսքը, կնպաստի տնտեսական ակտիվությանը, բնակավայրերում կավելանան ներդրումների և արտադրության ծավալները, կներդրվեն արդիական տեխնոլոգիաներ, կզարգանա գյուղատնտեսությունն ու կբարձրանա արտադրողականությունը:

Աղյուսակ

N	***Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով հաստատված պետական աջակցության ծրագրեր***	***Միջոցառման պայմանները Միջոցառման շրջանակում վարկի/լիզինգի սուբսիդավորման տոկոսադրույք***
1	Կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-L որոշում՝ Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2025թթ. ծրագիր	վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի 14 (արտարժույթի դեպքում՝ 8) տոկոսային կետով
2	Կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-L որոշում՝ Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր	Լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որ լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 0%
3	Կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-L որոշում՝ Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր	Լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի **12** (արտարժույթի դեպքում՝ 7) տոկոսային կետով
4	Կառավարության 2023 թվականի	վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումը

	հուլիսի 27-ի N 1284-L որոշում՝ Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագիր	կիրականացվի 12 տոկոսային կետով
5	Կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-L որոշում՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր	վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի 12 տոկոսային կետով

Հավելված N 2

ՀՀ կառավարության 2025 թվականի

-----ի N --- L որոշման

ՑԱՆԿ

Կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշմամբ հ
Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվական
հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկվ
(բացառությամբ՝ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների)

N	***Մարզի անվանում***	***Համայնքի անվանում***	***Բնակավայրի անվանում***
1	Արագածոտն	Ալագյազ	Ալագյազ
2			Ռյա Թազա
3			Ճարճակիս

4	Աշտարակ	Աշտարակ
5		Օշական
6		Օհանավան
7		Սասունիկ
8		Կարին
9		Նոր Ամանոս
10		Նոր Եդեսիա
11	Ապարան	Ապարան
12		Լուսագյուղ
13		Շենավան
14		Վարդենուտ
15	Թալին	Թալին

16			Արագածավան
17			Ձարինջա
18			Լուսակն
19			Գառնահովիտ
20			Ագարակավան
21			Հացաշեն
22			Ներքին Սասնաշեն
23		Ծաղկահովիտ	Հնաբերդ
24	Արարատ	Արարատ	Պարույր Սևակ
25			Արարատ գյուղ
26		Արտաշատ	Արտաշատ
27			Դեղձուտ
28			Բարձրաշեն

29		Ջրաշեն
30		Գետազատ
31		Այգեստան
32		Հնաբերդ
33		Վարդաշեն
34	Մասիս	Հայանիստ
35		Հովտաշատ
36		Նիզամի
37		Նոր կյուրին
38		Ջրահովիտ
39		Գեղանիստ
40		Արևաբույր

41			Մասիս
42		Վեդի	Վանաշեն
43			Փոքր Վեդի
44			Սիսավան
45			Լուսաշող
46			Ոսկետափ
47			Վեդի
48		Վերին Դվին	Վերին Դվին
49	Արմավիր	Արմավիր	Արաքս
50		Մեծամոր	Մրգաշատ
51			Երասխահուն
52			Վարդանաշեն
53			Հայկավան

54		Նոր Արտագերս
55		Նոր Կեսարիա
56	Վաղարշապատ	Էջմիածին
57		Ոսկեհատ
58	Արաքս	Ջրարբի
59		Հայկաշեն
60		Ջրառատ
61	Խոյ	Գեղակերտ
62		Ամբերդ
63	Բաղրամյան	Արգինա
64		Վանանդ
65	Փարաքար	Փարաքար

66			Պտղունք
67			Այգեկ
68	Գեղարքունիք	Սևան	Սևան
69		Գավառ	Գավառ
70		Ճամբարակ	Ճամբարակ
71			Դպրաբակ
72			Ձիլ
73			Թթուջուր
74		Մարտունի	Մարտունի
75			Երանոս
76			Վաղաշեն
77			Լիճք
78			Ծովինար

79		Մադինա
80		Ներքին Գետաշեն
81		Զոլաքար
82		Գեղհովիտ
83		Լեռնահովիտ
84	Վարդենիս	Շատջրեք
85		Արփունք
86		Շատվան
87		Կախակն
88		Արեգունի
89		Փոքր Մասրիկ
90		Մաքենիս

91			Վարդենիս
92	Լոռի	Ալավերդի	Օձուն
93			Աքորի
94			Ճոճկան
95			Հագվի
96			Արևաձագ
97			Ախթալա
98			Ալավերդի
99		Գյուլագարակ	Գարգառ
100			Վարդաբլուր
101		Թումանյան	Դսեղ
102			Լորուտ
103			Թումանյան

104	Լոռի Բերդ	Ագարակ
105	Սպիտակ	Սպիտակ
106		Արևաշող
107		Հարթագյուղ
108		Արջհովիտ
109		Շիրակամուտ
110	Ստեփանավան	Կաթնաղբյուր
111		Ստեփանավան
112	Տաշիր	Նորաշեն
113		Միխայլովկա
114		Մեծավան
115		Մեդովկա

116			Կաթնառատ
117			Տաշիր
118		Փամբակ	Վահագնի
119			Բազում
120			Դեբեդ
121	Կոտայք	Աբովյան	Աբովյան
122			Կամարիս
123			Կաթնաղբյուր
124			Արամուս
125			Մայակովսկի
126		Ակունք	Կոտայք
127			Կապուտան
128			Նոր գյուղ

129		Զառ
130	Բյուրեղավան	Նուռնուս
131	Գառնի	Գողթ
132		Գեղադիր
133	Ծաղկաձոր	Արտավազ
134	Հրազդան	Ջրառատ
135		Հրազդան
136		Լեռնանիստ
137	Նաիրի	Զովունի
138		Արագյուղ
139		Պռոշյան
140	Նոր Հաճըն	Արգել

141	Շիրակ	Ախուրյան	Ախուրյան
142			Ազատան
143			Կապս
144			Կառնուտ
145			Երազգավորս
146			Քեթի
147			Ձաջուռ
148			Մայիսյան
149		Ամասիա	Բերդաշեն
150			Արեգնադեմ
151			Բյուրակն
152			Ամասիա
153		Անի	Բագրավան

154		Ջրափ
155		Շիրակավան
156		Սառնաղբյուր
157	Աշոցք	Թորոսգյուղ
158		Մեծ Սեպասար
159		Աշոցք
160		Մուսայելյան
161		Ցողամարգ
162		Բավրա
163	Արթիկ	Արթիկ
164		Սարալանջ
165		Հայրենյաց

166			Փոքր Մանթաշ
167			Սարատակ
168			Գետափ
169			Փանիկ
170	Սյունիք	Գորիս	Հարթաշեն
171			Ակներ
172			Քարահունջ
173			Խնձորեսկ
174			Վերիշեն
175			Գորիս
176		Կապան	Սյունիք
177			Արծվանիկ
178			Վերին Խոտանան

179		Եղվարդ
180		Ծավ
181		Աճանան
182		Կապան
183	Մեղրի	Շվանիձոր
184		Լեհվազ
185		Ագարակ
186	Սիսիան	Վաղատին
187		Դարբաս
188		Իշխանասար
189		Գորայք
190		Սառնակունք

191		Աշոտավան
192		Նորավան
193		Ախլաթյան
194		Ույծ
195		Շաքի
196		Շաղաթ
197		Անգեղակոթ
198		Բռնակոթ
199		Սիսիան
200	Տաթև	Հարժիս
201		Տաթև
202		Հալիձոր
203		Խոտ

204			Շինուհայր
205		Տեղ	Քարաշեն
206			Տեղ
207			Խնածախ
208			Կոռնիձոր
209		Քաջարան	Կավճուտ
210			Բաբիկավան
211			Ձագիկավան
212	Վայոց ձոր	Եղեգնաձոր	Եղեգնաձոր
213		Արենի	Արենի
214			Չիվա
215			Արփի

216		Եղեգիս	Քարագլուխ
217			Արտաբույնք
218			Եղեգիս
219			Վայք
220		Վայք	Գոմք
221			Գետափ
222			Մարտիրոս
223	Տավուշ	Բերդ	Նավուր
224			Բերդ
225			Արծվաբերդ
226			Այգեձոր
227			Նորաշեն
228		Դիլիջան	Գոշ

229		Աղավնավանք
230	Իջևան	Կիրանց
231		Լուսաձոր
232		Գանձաքար
233		Կայան
234		Սևքար
235	Նոյեմբերյան	Դովեղ
236		Բագրատաշեն
237		Այրում
238		Ջուջևան
239		Պտղավան
240		Կոթի

241	Նոյեմբերյան
242	Կողբ
243	Ոսկևան